Պարույր Սևակ

Ութնյակներ

Մաս 3

21

Ախ, գոնե անփակ
Բերանը փակի,
Որ «Լո՛ւյս է, լույս է»-ն
Ականջ չծակի:
Այս ծակ-ակտիվը
Ո՞նց չի հասկանում.
Առանց աքլոր էլ
Լույսը կծագի:

22

Ամռան շոգին պաղ շվաքում
Մրափող կուժը
Ի՞նչ իմանա արեգակի
Ահարկու ուժը,-
Արեգակը նրա աչքում
Հայրաբար բարի՛,
Արեգակը նրա համար
Նույնիսկ քնքո՛ւշ է...

23

Երեկ՝ ուրիշ եղանակ,
Այսօր այլ բան է երգում,
Սիրով ժխտում ինքն իրեն
Եվ ինքն իրեն է հերքում:
Արդարանա՞լ է ուզում,
Բայց թե մեկ է - չի՛ օգնի.
-Էշ նստելը՝ մի ամոթ,
Էշից իջնելը՝ երկու...

24

Բեղերը քեզ քիչ են թվում -
Ուզում ես և լինի մորուք.
Հա՛մ ջահել մնալ ես ուզում,
Հա՛մ դառնալ իմաստուն ծերուկ,-
Դու շատի ետևից ընկած՝
Քիչն էլ ես բաց թողնում ձեռքից...
Ա՛խ, հիմա՛ր, այդ ո՞վ է բռնել
Մի ձեռքով երկու ձմերուկ:

25

Չէիր կարող երեկ ասել,
Թե՝ սև հոնք կա աչքիդ վրա,
Մինչդեռ այսո՛ր - քաղցր-մեղցը,
Մեղրածոր է, տեսե՛ք նրան...
Զգուշավո՛ր իմ բարեկամ,
Զգո՛ւյշ, այդքան մի քաղցրացիր,
Մեկ էլ տեսար՝ ճանճերն ագահ
Վրա տվին ու քեզ կերան:

26

Քո կյանքը ապարդյուն անցավ -
Անօգուտ, իզուր տեղ կորար,
Ինչպես որ բաց ծովի վրա
Տեղացող անձրևը վարար:
Շահեցիր լոկ ծաղր ու ծանակ՝
Միայնակ ցուցարարի պես,
Ո՛չ հասար, ո՛չ էլ ետ դարձար՝
Անհասցե փակ ծրարի պես...

27

Նա այնքան ջահել է դեռ,
Եռանդագին ու խանդավառ է,
Բլրաշատ այս դաշտը դեռ
Նրա աչքին մի հարթավայր է,
Չգիտի, որ ձավարը
Ցորեն է, բայց ծիլ չի տալիս,
Եվ, նայի՛ր, ինքնավստահ,
Մի անլուրջ ամբարտավան է:

28

Գարունն է գալիս, դիմավորեցե՛ք,-
Ահա և նրա պարզ «հեռագիրը»՝
Հին աշտարակին, մի ոտքի վրա
Տնկվել է նորից ծեր արագիլը:
Գարունն է գալիս: Վերադարձել է
Եվ արագիլը օտարությունից,
Իսկ սրա հոգին չի բացակայել,
Չի չվել երբեք, բայց... տարագիր է:

29

Նա դուրս է տալիս
Ծոտի ու պոտի,
Մեկ՝ խիստ պարզունակ
Ու մեկ էլ՝ խրթին:
Բայց կարևոր է
Գիտե՞ք, թե որը.
Լեզվին՝ մի բան է,
Այլ բան է՝ սրտին:
30
Ինքը մի նոր,
Մի իսկական շնաձուկ է,
Բայց քո՛ մեջ է
Փնտրում հնի մնացուկը:
Եվ գտնում է...
Գիտե՞ք որտեղ - հենց այն բանում,
Որ խորշում ես շնաձկից,
Ինչպես... հնում: